

ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածը ստացվել է՝ 10.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 21.03.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ ՄՎԵՏԼԱՆԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ

Ներածություն: 2017-2022թթ.-ների ծրագրով ՀՀ կառավարությունը նախատեսել էր ապահովել արտահանման ծավալների զգալի աճ՝ ապրանքների և ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 40-45%-ի¹, իսկ արդեն 2019թ.-ի ՀՀ կառավարության ծրագրի համաձայն 5 տարվա կտրվածքով տվյալ հարաբերակցությունը պետք է կազմեր 43-45%, մինչդեռ արտահանումը պետք է հանդիսանար տնտեսական աճի շարժիչը²: 2021թ.-ի ՀՀ կառավարության ծրագրի համաձայն նախատեսվում էր այդ հարաբերակցությունը 5 տարվա ընթացքում հասցնել 60%-ի՝ ապահովելով արտահանումը խթանող բավարար պայմաններ դիվերսիֆիկացիա և համապատասխան խթանման միջոցառումներ իրականացնելու ճանապարհով³: Իսկ, կայուն զարգացման ու առաջնահերթ ոլորտների սահմանման տեսանկյունից ՀՀ կառավարության կողմից արդյունաբերության զարգացման նպատակով 5 գերակա ոլորտներ են ընտրվել (սննդի արդյունաբերությունը, ոսկերչությունը և ադամանդագործությունը, ծանր արդյունաբերությունը (մետալուրգիա, քիմիա), սարքաշինությունը (սարքեր, մեքենաներ, արևային տեխնոլոգիաներ), դեղագործական արդյունաբերությունը)⁴, որոնց զարգացումը պայմանավորված էր լինելու արտահանման ծավալների աճով: Այս համատեքստում, նկատենք, որ արդեն 2022-2023թթ.-ներին ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ին գերազանցել էր 60%-ը, իսկ 2024թ.-ին՝ 75%-ը⁵: Մակայն ինչ վերաբերում է դիվերսիֆի-

¹ ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագիրը հաստատելու մասին N 646-Ա որոշման Հավելված, էջ 8:

² ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության 2019 թ. ծրագիրը հաստատելու մասին N 65-Ա որոշման Հավելված, էջ 44-45:

³ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիրը հաստատելու մասին N 1363-Ա որոշման Հավելված, էջ 22, 27: ՀՀ կառավարության 2021 թ.-ի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված հավելված, էջ 235:

⁴ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N 534-Լ Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների հայեցակարգը հաստատելու մասին որոշման հավելված:

⁵ ՀՀ ՎԳ-ի «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=202>:

կացմանը, ապա ապրանքների կառուցվածքում արդեն 2024թ.-ին մեկ ապրանքախմբին (խումբ 71) բաժին էր ընկնում 61.7%-ը 2021թ.-ի 11%-ի համեմատ⁶, իսկ ծառայությունների կտրվածքով ճանապարհողությանը բաժին էր ընկնում ծառայությունների արտահանման 50%-ը և ավելին 2022-2023թ.-ներին⁷: Այս պարագայում, կարևորվում է նաև ոչ միայն ապրանքների դիվերսիֆիկացումը ըստ ապրանքային խմբերի, ինչպես նաև ըստ շուկաների, քանի որ 2022-2023թթ.-ներին դեպի ՌԴ արտահանումը կազմում էր ապրանքների արտահանման 40%-ը և ավելին⁸: Հետևաբար կարևորվում է դեպի ԵՄ արտահանման ծավալների աճը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱԺ-ն 2025թ.-ի փետրվարի 12-ին առաջին ընթերցմամբ ընդունել է ԵՄ-ին ՀՀ-ի անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագիծը, որն ԱԺ էր հասել «Եվրաքվե» նախաձեռնության միջոցով⁹, քանի որ ըստ նախաձեռնողների այն կնպաստի տնտեսական անվտանգությանը «տնտեսության բազմազանեցմամբ, արտադրողականության և ապրանքների ու ծառայությունների որակի բարձրացմամբ, որ հնարավոր է միայն Արևմուտքի ու Եվրամիության հետ համագործակցությամբ, ներդրումներին ու տեխնոլոգիաներին հասանելիության ապահովմամբ, արդյունաբերության վերագործարկմամբ, տնտեսության կառուցվածքի փոփոխությամբ և իրական հատվածի մասնաբաժնի մեծացմամբ, լոգիստիկ նոր կապերի ստեղծմամբ, հայկական արտադրանքը եվրոպական շուկայում մրցունակ դարձնելով»¹⁰: Իսկ արդեն 2025 թվականի մարտի 26-ին ԱԺ-ն երկրորդ ընթերցմամբ և ամբողջականությամբ ընդունեց «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» ՀՀ օրենքը¹¹:

Դեռևս 2010թ.-ի հուլիսին Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ-ն սկսել էր բանակցություններ Հայաստանի հետ Ասոցացման Համաձայնագրի շուրջ, իսկ արդեն 2012թ.ի մայիսին՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ (ԽՀԱԱՀ (Deep and Comprehensive Free trade Area (DCFTA)))¹²: 2013թ.-ին նախատեսված էր ԵՄ-ի և Հայաստանի միջև

⁶ ՄԱԿ-ի «UN Comtrade» աղանգ տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

⁷ ՀՀ ՎԿ-ի «Վճարային հաշվեկշիռ 6» աղանգ տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=203>:

⁸ ՀՀ ՎԿ-ի «ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա՝ ըստ երկրների» աղանգ տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=717>:

⁹ ՀՀ ԱԺ-ի 2025 թ.-ի փետրվարի 12-ի «Եվրամիությանը Հայաստանի անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագիծը» Ք-985-13.12.2024, 29.01.2025-ԵԻ-011/1:

¹⁰ «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման հիմնավորում, Ք-985-13.12.2024, 29.01.2025-ԵԻ-011/1:

¹¹ ՀՀ օրենքը «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» առ. 26.03.2025թ., Ք-985-13.12.2024, 29.01.2025-ԵԻ-011/2ամբ.

¹² European Commission. (2013). *EU-Armenia Deep and Comprehensive Free Trade Area* (MEMO/13/728),

Ասոցացման համաձայնագրի ստորագրումը, որի բաղկացուցիչ մասն էր կազմելու ԽՀԱԱՀ-ը¹³, ինչը հնարավորություն էր տալու ՀՀ-ին զարգացնելու ԵՄ-ի հետ տնտեսական հարաբերությունները¹⁴, անկախ ԵՄ-ի անդամակցության անդամի կարգավիճակի և անկախ այն բանից, թե երբ կդառնար ԵՄ լիիրավ անդամ: ԽՀԱԱՀ-ն նպատակ ուներ ամրապնդելու առևտրային կապերը ԵՄ-ի հետ, ինչպես նաև նոր ներդրումների հնարավորություն հանդիսանալ, ավելացնելու առևտրաշրջանառությունը, և այլն¹⁵: Հարավային Կովկասում Վրաստանը շահել է ԽՀԱԱՀ-ի ընձեռած հնարավորություններից, որը ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրը ստորագրել է 2014թ.-ի հունիսին, և այն ուժի մեջ է մտել 2016թ.-ի հուլիսին՝ հնարավորություն ընդեձնելով Վրաստանին օգտվելու ավելի արդյունավետ մաքսային ընթացակարգերից, որի պարագայում չեղարկվում է մաքսատուրքերի գերակշիռ մասը¹⁶: ԽՀԱԱՀ-ի շնորհիվ ԵՄ շուկան բացվեց Վրաստանում արտադրվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների համար, քանի որ վերացվեցին ինչպես սակագնային, այնպես էլ ոչ սակագնային խոչընդոտները, ինչը չէր նախատեսվի, եթե Վրաստանը պարզապես կնքած լիներ Ազատ առևտրի համաձայնագիր¹⁷: Միևնույն ժամանակ բանակցությունների ժամանակ ձեռքբերված արդյունքների հիման վրա ԽՀԱԱՀ-ի ուժի մեջ մտնելուն պես վրացական ծագում ունեցող բոլոր ապրանքները (բացառությամբ սխտորի) ԵՄ արտահանելիս, ազատվել են մաքսատուրքերից: Ընդհանուր առմամբ ԽՀԱԱՀ-ը. «նպաստում է Վրաստանում արտադրվող արտադրանքի արտահանման ներուժի աճին դեպի Եվրամիության երկրներ և, համապատասխանաբար, Վրաստանի տնտեսական աճին»¹⁸: Այս պարագայում ՀՀ-ն ևս կարող է օգտվել ԽՀԱԱՀ-ի ընձեռած հնարավորություններից, երբ կնվքի Ասոցացման համաձայնագիր ԵՄ-ի հետ, ինչը հնարավորություն կտա ավելի լայն

https://ec.europa.eu/commission/presscorner/api/files/document/print/en/memo_13_728/MEMO_13_728_EN.pdf:

¹³ Perchoc, P. (2018). *Comprehensive and Enhanced Partnership Agreement with Armenia* (PE 623.565). European Parliamentary Research Service. Retrieved from: [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2018/623565/EPRS_ATA\(2018\)623565_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2018/623565/EPRS_ATA(2018)623565_EN.pdf):

¹⁴ European Commission. (2013). *EU-Armenia Deep and Comprehensive Free Trade Area* (MEMO/13/728), https://ec.europa.eu/commission/presscorner/api/files/document/print/en/memo_13_728/MEMO_13_728_EN.pdf:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ European Commission. (n.d.). *EU-Georgia Deep and Comprehensive Free Trade Area*, <https://trade.ec.europa.eu/access-to-markets/en/content/eu-georgia-deep-and-comprehensive-free-trade-area>:

¹⁷ Infocenter.gov.ge. (n.d.). *Ասոցացման մասին համաձայնագիրը*, <https://infocenter.gov.ge/hy/eu-georgia/association-agreement/>:

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

դիվերսիֆիկացիա ապահովել ինչպես շուկաների, այնպես էլ ապրանքախմբերի կտրվածքով:

Հետևաբար, կարևորվում է ՀՀ արտահանման կառուցվածքի վերլուծությունը՝ հատկապես ապրանքային խմբերի կտրվածքով վերջիններիս համեմատական առավելությունները բացահայտելու տեսանկյունից, քանի որ դիվերսիֆիկացման համատեքստում մրցակցային համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերով պայմանավորված արտահանման ծավալների աճը կարևոր նշանակություն ունի տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու գործում, ինչն էլ պայմանավորում է տվյալ **հետազոտության արդիականությունը**: Սույն հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ կառավարությանը տնտեսության և արտահանման ավելի լայն դիվերսիֆիկացում ապահովելու նպատակով համապատասխան ռազմավարությունները մշակելիս:

Հոդվածի **նպատակն է** վերլուծել ու բացահայտել ՀՀ մրցակցային առավելությունները՝ արտահանվող ապրանքախմբերի կտրվածքով մի շարք համեմատական առավելությունների ինդեքսների հաշվարկման հիման վրա՝ մատնանշելու առկա մարտահրավերները և նախանշել արտահանման դիվերսիֆիկացման հնարավորությունները ԵՄ հնարավոր անդամակցության համատեքստում: Ներկայացված նպատակի իրագործման համար հոդվածում **խնդիր է դրվել**՝

- մի շարք համաթվերի հիման վրա վերլուծել և հաշվարկել արտահանվող տարբեր ապրանքային խմբերի համեմատական առավելությունը:

- ԵՄ հնարավոր անդամակցության համատեքստում առաջարկել քայլեր արտահանման ավելի լայն դիվերսիֆիկացում ապահովելու նպատակով:

Գրականության ակնարկ: Ապրանքային խմբերի կամ դիրքերի բացահայտված համեմատական առավելությունը կարելի է հաշվարկել Բալասսայի (1965թ.)¹⁹ կողմից առաջարկված համաթվի միջոցով (Revealed Comparative Advantage, (BRCA)): Հետագայում առաջարկել են այդ համաթվից բխող՝ այլ մոդիֆիկացված համաթվեր: Դալումը և այլոք (1998թ.) առաջարկել են Բացահայտված համաչափ համեմատական առավելությունների համաթիվը (Revealed Symmetric Comparative Advantage (RSCA))²⁰: Հոենը և Օոսթերհավենը (2006թ.), իրենց հեթին, մշակել էին Գումարային բացահայտված համեմատական առավելությունների համաթիվը (Additive Revealed Comparative Advantage (ARCA))²¹: Իսկ Յուի և այլոք (2008թ.) կողմից առաջարկվել է Նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների համաթիվը (Normalized

¹⁹ Balassa, B. (1965). Trade Liberalisation and “Revealed” Comparative Advantage. The Manchester School of Economic and Social Studies, 33(2), pp. 105-107, doi: 10.1111/j.1467-9957.1965.tb00050.x.

²⁰ Dalum, B., Laursen, K., & Villumsen, G. (1998). Structural Change in OECD Export Specialisation Patterns: de-specialisation and “stickiness”. International Review of Applied Economics, 12(3), pp.427-428. doi:10.1080/02692179800000017

²¹ Hoen, A. R., & Oosterhaven, J. (2006). On the measurement of comparative advantage. The Annals of Regional Science, 40(3), 683–684. doi.: 10.1007/s00168-006-0076-4

Revealed Comparative Advantage (NRCA))²²: Պրոռուդմանը և Ռեդդինգը (1998թ.) մշակել էին Միջինացված բացահայտված համեմատական առավելությունների համաթիվը (WRCA)²³ և այլն: Իսկ համաթվերի հաշվարկը լայն կիրառվել է բազում օտարերկրյա հեղինակների կողմից և վերջիններիս հիման վրա հաշվարկվել են տարբեր երկրների համաթվերը ներառյալ ՀՀ օրինակով հայ հեղինակների կողմից, ինչպես նաև վերջիններիս հիման վրա իրականացվել է ապրանքանքայինների կամ ապրանքային դիրքերի քարտեզավորում: Այս համաթվերի միջոցով բացահայտվում են ոչ միայն ի համեմատական առավելություններ ունեցող ապրանքայինները կամ ապրանքային դիրքերը, այլև նաև թե ինչ մակարդակի վրա են գտնվում այդ առավելություններ և որ խումբը քանի անգամն է աելի մրցունակն համարվում մեկ այլ գործիքի համեմատ: Այս համաթվերը նպատակ են հետապնդում օժանդակելու կառավարությանը իր համապատասխան քաղաքականությունները մշակելիս: ՀՀ-ում առաջին փորձերից մեկը հաշվարկելու 1-ից ավելի համաթիվ իրականացվել է Մ. Մելքումյանի և այլոց (2015թ.)²⁴, և Գ. Նազարյանի և Դ. Հախվերդյանի (2015թ.)²⁵ կողմից, ովքեր ԱՏԳ ԱԱ երկնիշ դասակարգման ապրանքայինների համեմատական առավելությունները հաշվարկել են Բալասսայի և Լաֆեյի համաթվերի հիման վրա ՀՀ-ի և ԵԱՏՄ երկրների կտրվածքով: BRCA-ը հաշվարկվել է նաև Մալումյանի և Գյուլազյանի կողմից (2016թ.)²⁶: Մի շարք համեմատական առավելությունների համաթվերը հաշվարկվել են Ա. Մակարյանի (2018թ.)²⁷ կողմից, ինչպես նաև ապրանքայինների քարտեզավորում է իրականացվել Ուլլահի և Կազուոի (2012թ.)²⁸ մեթոդաբանության հիման վրա 2012-2017թթ.-ների տվյալների կտրվածքով²⁹: Շ. Մով-

²² Yu, R., Cai, J. & Leung, P. (2008). The normalized revealed comparative advantage index. The Annals of Regional Science, 43(1), 270-274. doi: 10.1007/s00168-008-0213-3

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 269:

²⁴ Մելքումյան Ս., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Բահարյան Ֆ., Հակոբյան Տ. Առաքելյան Տ., Հովակիմյան Հ., Մելքումյան Զ. (2015). ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում.- Եր.: Տնտեսագետ, էջ 91-94 («Ամբերդ» մատենաշար 24)

²⁵ Նազարյան Գ., Հախվերդյան Դ. (2015). Հայաստանի համեմատական առավելությունները ԵՏՄ երկրների առևտրային հոսքերի համադրության մեջ. 21-րդ ԴԱԴ. Տեղեկատվական-վերլուծական հանդես, 3(61). Նորավանք ԳԿՀ. էջ 67-86.

²⁶ Մալումյան Գ., Գյուլազյան Է. (2016). Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) տարածքում նոր տնտեսական հնարավորությունների բացահայտում, ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյան և ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, -Եր.: Անտարես, էջ 36-37:

²⁷ Makaryan, A.R. (2018). Armenia's Comparative Advantage in Producing and Exporting the Harmonized System Standard Product Groups. Региональные проблемы преобразования экономики, 2(88), 93-102. doi:10.26726/1812-7096-2018-2-93-102.

²⁸ Ullah, M. & Kazuo, I. (2012). Dynamics of Comparative Advantage and Export Potential in Bangladesh, The Ritsumeikan Economic Review, Vol. 61, No. 4, pp. 471-484.

²⁹ Մակարյան, Ա. Ռ., Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղավածության քաղաքականության

սիայանը (2021թ.)³⁰ ապրանքների քարտեզավորում է իրականացրել նույն մեթոդաբանությամբ՝ ըստ եռանիշ դասակարգման (SITC Rev. 3) 2019թ.-ի համար: Հ. Մկրտչյանը (2024թ.)³¹ հաշվարկել է BRCA-ը 2018-2022թթ.-ների համար, ինչպես նաև իրականացրել է քարտեզավորումը նաև Վիդոդոյի (2008թ.)³² կողմից առաջարկված մեթոդաբանության հիման վրա՝ պարզելով, որ 2 մեթոդով հաշվարկված արդյունքները իրարից չեն տարբերվում: Հիմք ընդունելով վերաարտահանման միտումները³³ մի շարք ապրանքախմբերի կտրվածքով, հատկապես կարևորվում է 2023թ.-ի տվյալներով համեմատական առավելություններ ունեցող ապրանքախմբերի բացահայտումը՝ ավելի լայն դիվերսիֆիկացիա ապահովելու տեսանկյունից:

Մեթոդաբանություն: Հաշվարկվել են վերը թվարկված համեմատական առավելությունների հետևյալ համաթվերը՝ BRCA-ը, RSCA-ը, NRCA-ը, ARCA-ը, ինչպես նաև WRCA-ը 2023թ.-ի համար 97 ապրանքախմբերի արտահանման տվյալների հիման վրա՝ ըստ ապրանքների նկարագրման և ծածկագրման Ներդաշնակեցված համակարգի (HS) 2-նիշ դասակարգման: ՀՀ-ի և այլ երկրների ապրանքային խմբերի (նաև դիրքերի) արտահանման տվյալները, վերցվել են ՄԱԿ-ի առևտրի վիճակագրությանը վերաբերող տվյալների բազայից³⁴:

Վերլուծություն: Մեր կողմից հաշվարկված բոլոր համեմատական առավելությունների համաթվերի համաձայն (BRCA, NRCA, SRCA, ARCA, WRCA) ՀՀ բոլոր ապրանքախմբերից միայն 21-ի դեպքում են արձանագրվել համեմատական առավելությունների առկայություն՝ ընդ որում 19-ի դեպքում վերջիններս բացահայտվել են բոլոր համաթվերի արդյունքներով (տե՛ս Աղյուսակ 1) ընդհանուր 97 ապրանքախմբի պարագայում: Տվյալ ապրանքախմբերին բաժին էր ընկնում ապրանքների արտահանման մոտ 69.2%-ը, մինչդեռ տվյալ ցուցանիշը 2021թ.-ին կազմել էր 87.4%: 2023թ.-ին 2021թ.-ի համեմատ (նախքան ռուս-ուկրաինական պատերազմի սկիզբը) այս տեսակարար կշռի կրճատումը 18.2%-ային կետով, հիմնականում պայմանավորված էր նաև 2 ապրանքային խմբի (Խումբ 84, 85)³⁵ արտահանման (վերաարտահանմամբ՝ նաև ՀՀ տարածքում որոշակի վերա-

առաջնայնությունները ՀՀ-ում/ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ ՏԻ: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018. էջ 68-75:

³⁰ Մովսիսյան, Շ. (2021). ՀՀ արտահանման ներուժը, ո՞ր ոլորտում է ՀՀ-ն մրցունակ, Ամբերդ տեղեկագիր, N3, էջ 89-95, doi: 10.52174/2579-2989_2021_3_89:

³¹ Mkrtchyan, H. G. (2024). Products Mapping: The Case of Armenia. Региональные проблемы преобразования экономики, 5 (163), 258-271. doi:10.26726/1812-7096-2024-5-258-271.

³² Widodo, T. (2008). Dynamic changes in comparative advantage: Japan “flying geese” model and its implications for China. Journal of Chinese Economic and Foreign Trade Studies, 1(3), pp. 200–213. doi: 10.1108/17544400810912365.

³³ ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

³⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁵ Խումբ 84՝ Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, դրանց մասերը, ձայնագրման և ձայնավերարտադրության

մշակման ենթարկվելուց հետո) ծավալների աճով, քանի որ Խումբ 71-ը ներառված էր համեմատական առավելություններ ունեցող խմբերի ցանկում, որի կտրվածքով ևս արձանագրվել էր մեծ ծավալների վերաարտահանում:

Ստացված արդյունքները փաստում են այն մասին, որ 2023թ.-ին 21 խմբից 8-ը կամ համեմատական առավելություններ ունեցող խմբերից 1/3-րդից ավելին ներկայացնում են գյուղատնտեսության ճյուղը և սննդամթերքի արտադրության ոլորտը (խմբեր՝ 1, 3, 6, 7, 8, 9, 18, 20)՝ կազմելով արտահանման 3.39%-ը կամ շուրջ 283.8 մլն ԱՄՆ դոլար: Հետաքրքրական է նկատել, որ նախքան ռուս-ուկրաինական պատերազմի սկիզբը այս խմբերի արտահանումը գրեթե նույն մակարդակի վրա էր (շուրջ 283.2 մլն ԱՄՆ դոլար), սակայն վերջինիս տեսակարար կշիռը ապրանքների արտահանման մեջ կազմում էր 9.55% 2021թ.-ին: Սրա հիմնական պատճառը մի շարք ապրանքախմբերի կտրվածքով արձանագրված վերաարտահանումն էր (նաև ՀՀ տարածքում որոշակի վերամշակման ենթարկվելուց հետո), ինչպես նաև ՀՀ դրամի ՌԴ ռուբլու նկատմամբ արձանագրված արժևորումը 2023թ.-ին, որը շարունակվեց 2024թ.-ին ևս³⁶: ՀՀ դրամի արժևորման արդյունքում ՀՀ ծագում ունեցող ապրանքները ՌԴ շուկայում կորցնում էին իրենց գնային մրցունակությունը, քանի որ նշված ապրանքախմբերի պարագայում (բացառությամբ խումբ 1-ի, որի դեպքում հիմնական արտահանման շուկան Ծոցի և Մերձավոր Արևելքի երկրներն էին) հիմնական արտահանման շուկան հանդես է եկել ՌԴ-ն: Հետևաբար ՀՀ դրամի ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորումը արտահանումը խոցելի է դարձնում փոխարժեքի տատանման նկատմամբ, ինչն էլ շեշտադրում է այդ խմբերի պարագայում ավելի լայն դիվերսիֆիկացիայի ապահովումը միջնաժամկետ հատվածում: 2023թ.-ին տվյալ ապրանքախմբերի պարագայում հիմնական և ապրանքային դիրքերն էին՝ «թարմ ձուկը» (0302), «լոլիկը» (0702), «սուրճը» (0901), «կակաո պարունակող շոկոլադը» (1806) և այլն:

Խմիչքների արտադրությունը ներկայացնող ապրանքախմբի արտահանումը (Խումբ 22) ապրանքների արտահանման շուրջ 4.50%-ն էր՝ կազմելով մոտ 377 մլն ԱՄՆ դոլար 2023թ.-ին: Թեև 2021թ.-ի համեմատ աճվել էին ապրանքախմբի արտահանման ծավալները 2023թ.-ին (2021թ.-ին՝ 291.8 մլն ԱՄՆ դոլար), սակայն խմբի տեսակարար կշիռը կրճատվել էր 5.34%-ային կետով (9.84%): Հիմնական արտահանման շուկա համարվող ՌԴ-ի պարագայում թեև 2023թ.-ին արձանագրվել էր ՀՀ դրամի ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորում³⁷, սակայն արտա-

ապարատուրա, հեռուստատեսային պատկերի ու ձայնի ձայնագրության և վերաարտադրության ապարատուրա, դրանց մասերն ու պարագաներ: Խումբ 85՝ Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, դրանց մասերը, ձայնագրման ու ձայնավերաարտադրության ապարատուրա, հեռուստատեսային պատկերի և ձայնի գրառման և վերաարտադրության ապարատուրա, դրանց մասերն ու պարագաներ:

³⁶ ՀՀ ԿԲ-ի «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» առցանց տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

³⁷ Տե՛ս նույն տեղում:

հանման ծավալների աճ էր գրանցվել հիմնականում պայմանավորված 2208 ապարանքային դիրքի շնորհիվ (կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր), որի ծավալները աճում էին 2021թ.-ի համեմատ 2022-2024թթ.-ներին: Հատկապես 2024թ.-ի ծավալների աճը կարող է մատնանշել այն հանգամանքը, որ հատկապես կոնյակը ամբողջով է իր դիրքը այդ շուկայում, սակայն հետագա ՀՀ դրամի արժևորումը կարող է բացասաբար ազդել ապրանքախմբի արտահանման ծավալների վրա միջնաժամկետ հատվածում՝ շեշտադարձով այդ ապրանքային դիրքի կտրվածքով ըստ շուկաների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը:

2023թ.-ին ծխախոտային արտադրատեսակների արտադրության արտահանմանը (խումբ 24) բաժին էր ընկել արտահանման 4.55%-ը՝ կազմելով շուրջ 381 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2021թ.-ին տվյալ մասնաբաժինը 8.43% էր 2021թ.-ին՝ կազմելով շուրջ 250 մլն ԱՄՆ դոլար: Մա նշանակում է, որ ՀՀ-ին հաջողվել էր ավելացնել արտահանման ծավալները՝ փորձելով ամրապնդել իր մրցակցային դիրքերը արտահանման շուկաներում և նոր շուկաներ մուտք գործել՝ մասնավորաբար Հոնգ Կոնգ, Չինաստան, ԱՄԷ, Ռուսաստան և այլն, մինչդեռ Իրաքը պահպանելով որպես հիմնական շուկա, որին բաժին էր ընկնում ծխախոտի արտահանման (ծածկագիր՝ 2404) ծավալների շուրջ 46%-ը, մինչդեռ տվյալ մասնաբաժինը 2021թ.-ին կազմում էր մոտ 65%:

2023թ.-ին համամետական առավելություններ ունեցող 21 խմբերից 4-ը (Խումբ՝ 26, 72, 76, 78) հիմնականում ներկայացնում էին մետաղական հանքաքարի արդյունահանման (պղնձի, ցինկի, մոլիբդենի, ինչպես նաև ոսկի պարունակող խտահանքեր), հիմնական մետաղների (բացառության ոսկու) արտադրության (հիմնականում ֆեռոմոլիբդեն, ալյումինե փայլաթիթեղ և չմշակված կապար) ոլորտների արտահանումը: Նշված խմբերի արտահանումը 2023թ.-ին կազմել էր 1.20 մլրդ ԱՄՆ դոլար (տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ՝ 14.4%), մինչդեռ 2021թ.-ին արտահանման ծավալները գերազնցում էին 2023թ.-ի ցուցանիշին (տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ՝ 42.5%): Այս ապրանքախմբերի արտահանման հիմնական շուկաներն էին համարվում Չինաստանը, Եվրոպական երկրները, ինչպես նաև ՌԴ-ն: Իսկ սպառազինությունների նկատմամբ պահանջարկի աճը կհանգեցնի նշված խմբերի կտրվածքով մի շարք ապրանքների նկատմամբ պահանջարկի աճին, որի արդյունքում միջնաժամկետ հատվածում կավելանա նաև տվյալ ապրանքների արտահանումը³⁸:

Փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից այլ արտադրատեսակների արտադրության ոլորտը ներկայացնող հիմնական արտադրատեսակի արտահանումը (խումբ 45) պայմանավորված էր գերազանցապես մեկ ապրանքային դիրքի արտահանմամբ (շեղջաքարացված (ազլումերացված) խցան (կապակցող նյութով կամ առանց դրա) և դրանից պատրաստված արտադրատեսակներ (ծածկագիր՝ 4504)): Հետաքրքրական է նկատել, որ վերջինիս արտահանման

³⁸ Galoyan, D., Tadevosyan, Z., Makaryan, A., & Mkrtchyan, H. (2024). Mining of Metal Ores Industry und Economic Growth Nexus in Armenia: Challenges and Prospects. Proceedings on Engineering Sciences, 6(2), p.740. doi.: 10.24874/pes06.02.030

ծավալը չէր գերազանցում 300 ԱՄՆ դոլարը 2021թ.-ին, 2022-2023թթ.-ին այդ ծավալը տատանվում էր 900,000-1,000,000 ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ արդեն վերջինս 2024թ.-ին կտրուկ նվազեց և կազմում էր շուրջ 33,000 ԱՄՆ դոլար, ինչը

Աղյուսակ 1.

Արտահանվող ապրանքամբների համեմատական առավելությունները
2023թ.-ին՝ ըստ մի շարք համաթվերի³⁹

Խումբ	Անվանում	BRCA	NRCA	SRCA	ARCA	WRCA	BRCA 2018- 2022 միջին
1	Կենդանի կենդանիներ	+	+	+	+	+	+
3	Ձուկ և խեցգետնակերպեր, կակդամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	+	+	+	+	+	+
6	Կենդանի ծառեր և այլ բույսեր, կոճղեզներ և բույսերի այլ նույնանման մասեր. հատած ծաղիկներ և զարդաբույսեր	+	+	+	+	+	+
7	Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղ	+	+	+	+	+	+
8	Ուտելի մրգեր և ընկույզներ. ցիտրուսային պտուղների կեղև ու դրմի կճեպներ					+	
9	Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ	+	+	+	+	+	
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք					+	
20	Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք	+	+	+	+	+	+

³⁹ ՄԱԿ-ի «UN Comtrade» անցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>: Mkrtchyan, H. G. (2024). Products Mapping: The Case of Armenia. Региональные проблемы преобразования экономики, 5 (163), pp. 262-263. doi: 10.26726/1812-7096-2024-5-258-271: Հեղինակների հաշվարկ: Նշում՝ +՝ նշանակում է, որ տվյալ խումբը համապատասխան համաթվի արժեքի հիման վրա դասակարգվել է որպես համեմատական առավելություն ունեցող ապրանքախումբ, *՝ նշանակում է խումբն ունի թույլ համեմատական առավելություն, **՝ միջին, իսկ ***՝ ուժեղ:

22	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ	***	+	+	+	+	***
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	***	+	+	+	+	***
26	Հանքաքարեր, խարամ և մոխիր	***	+	+	+	+	***
43	Բնական և արհեստական մորթի, դրանից պատրաստված արտադրատեսակներ	+	+	+	+	+	
45	Խցան և դրանից պատրաստված արտադրատեսակներ	+	+	+	+	+	
57	Գորգեր և հատակի այլ մանածագործական ծածկույթներ	+	+	+	+	+	
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ	+	+	+	+	+	+
62	Հագուստ և հագուստի պարագաներ՝ բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից և պարագաներից	+	+	+	+	+	***
71	Մարգարիտ՝ բնական կամ աճեցրած, թանկարժեք կամ կիսա-թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, մետաղներ՝ երեսապատված թանկարժեք մետաղներով, և դրանցից պատրաստված արտադրատեսակներ, բիժուտերիա, մետաղադրամներ	***	+	+	+	+	***
72	Սև մետաղներ	+	+	+	+	+	+
76	Ալյումին և դրանից պատրաստված արտադրատեսակներ	+	+	+	+	+	+
78	Կապար և արտադրատեսակներ դրանից	+	+	+	+	+	
92	Երաժշտական գործիքներ. դրանց մասերը և պարագաները	+	+	+	+	+	

բացառապես պայմանավորված էր դեպի ՌԴ արտահանման ծավալների տատանումներով: Համադրելով արտահանման և ներմուծման տվյալները 2021-2024թթ.-ների կտրվածքով, կարելի է ենթադրել որ վերարտահանմամբ էր պայմանավորված եղել տվյալ խմբի որպես համեմատական առավելություններ ունեցող խմբի բացահայտումը: Եթե նախկինում կատարված ուսումնասիրությունների

արդյունքների հետ^{40,41} համեմատենք մեր կողմից ստացվածի հետ, ապա խումբ 45-ը որպես համեմատական առավելություն ունեցող խումբ է բացահայտվել միայն 2022թ.-ին 2012-2022թթ.-ի կտրվածքով:

Նմանատիպ արդյունք է արձանագրվել Խումբ 92-ի կտրվածքով, քանի որ դեպի ՌԴ՝ հատկապես էլեկտրական երաժշտական գործիքների (9207) արտահանմամբ էր պայմանավորված տվյալ խմբի համեմատական առավելությունների բացահայտումը, որը նախորդ տարիների արդյունքների համեմատ առաջին անգամ էր հայտնվել 2023թ.-ին 2012-2023թթ.-ների ընթացքում: Արդեն 2024թ.-ին խմբի արտահանման ծավալները կտրուկ նվազել էին, ինչը նշանակում է, որ խումբը չի համարվելու համեմատական առավելություններ ունեցող, իսկ նշված ապրանքային դիրքի արտահանումը կազմել էր շուրջ 4.61 մլն ԱՄՆ դոլար 2023թ.-ին, իսկ 2024թ.-ին՝ 35,783 ԱՄՆ դոլար (2021թ.-ին՝ 99,246 ԱՄՆ դոլար):

2023թ.-ին համամետական առավելություններ ունեցող 21 խմբերից ևս 4-ը (Խումբ՝ 43, 57, 61, 62) ներկայացնում էին թեթև արդյունաբերությունը, որի պարագայում արտահանման գերակշիռ մասը բաժին էր ընկնում հագուստի արտադրության ոլորտի արտադրատեսակների արտահանմանը: Այս խմբերի արտահանումը 2023թ.-ին կազմել էր 332.11 մլն ԱՄՆ դոլար, որը կազմել էր ընդհանուր արտահանման շուրջ 4%-ը մինչդեռ 2021թ.-ին տվյալ խմբերի արտահանման մասնաբաժինը 6.1% էր (179.8 մլն ԱՄՆ դոլար): Բացառությամբ 62 խմբի մնացած երեք ապրանքախմբի արտահանման գերակշիռ մասը (շուրջ 90%-ը և ավելին) բաժին էր ընկել ՌԴ-ին 2023թ.-ին իսկ խումբ 62-ի դեպքում շուրջ 43.4%-ը (2021թ.-ին՝ 32%): Խումբ 57-ի պարագայում, մրցակցային առավելությունը պայմանավորված էր վերարտահանմամբ, ինչպես խումբ 45-ի և 92-ի պարագայում: Միևնույն ժամանակ, քանի որ 2022թ.-ի սկզբից ՌԴ-ն սկսել էին լքել Արևմտյան բրենդերը, ապա շուկան բաց էր այլ երկրներից արտահանողների համար, ինչն էլ հնարավորություն կարող էր ընձեռել ՀՀ-ին ավելացնելու արտահանման ծավալները: Միևնույն ժամանակ, քանի որ զգալիորեն աճել էին այլ երկրներից ներմուծման ծավալները, ապա ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման ծավալների աճը պայմանավորված է եղել վերարտահանմամբ, որն անմիջականորեն չի իրականացվել բուն տեղական արտադրողների կողմից: Սա փաստվում է այն հանգամանքով, որ տեղական արտադրողների դեպի ԵԱՏՄ անդամ-երկրներ (գերազանցապես ՌԴ)

⁴⁰ Makaryan, A.R. (2018). Armenia's Comparative Advantage in Producing and Exporting the Harmonized System Standard Product Groups. Региональные проблемы преобразования экономики, 2(88), p.98. doi: 10.26726/1812-7096-2018-2-93-102. Mkrtchyan, H. G. (2024). Products Mapping: The Case of Armenia. Региональные проблемы преобразования экономики, 5 (163), p.263. doi:10.26726/1812-7096-2024-5-258-271.

⁴¹ Մակարյան, Ա. Ռ., Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղավածության քաղաքականության առաջնայնությունները ՀՀ-ում/ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ ՏԻ, Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018. էջ 71:

արտահանման ծավալները 2021թ.-ի համեմատ նվազում էին 2022-2024թթ.-ին⁴² կազմելով 11.46 մլրդ ՀՀ դրամ 2024թ.-ին (14.54 մլրդ ՀՀ դրամի համեմատ), ինչ էլ հիմնականում պայմանավորված էր ՀՀ դրամի ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորմամբ 2023-2024թթ.-ներին⁴³: Սա նշանակակալում է, որ ՀՀ դրամի հետագա ամրապնդումը շարունակելու է բացասաբար ազդել ՀՀ հագուստի պարագաների ՌԴ-ում գնային մրցունակության վրա և ՀՀ-ն կկորցնի շուկայի մասնաբաժինը: Ինչ վերաբերում է ՀՀ ընկերությունների կողմից արտապատվիրման աշխատանքների կատարման շրջանակում դեպի ԵՄ երկրներ արտահանման ծավալներին, ապա այդ ծավալները 2021թ.-ի համեմատ աճել էին 2022-2023թթ.-ներին, սակայն 2024թ.-ին 2023թ.-ի համեմատ ծավալները կրճատվել էին՝ կազմելով 12.53 մլրդ դրամ (2023թ.-ին՝ 12.91 մլրդ ՀՀ դրամ)⁴⁴, ինչն էլ պայմանավորված էր ՀՀ դրամի Եվրոյի նկատմամբ արժևորմամբ 2022-2024թթ.-ներին⁴⁵: Այս պարագայում ՀՀ ընկերությունների համար բավականին բարդ կլինի կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում գնային մրցունակությունը պահպանել, որի պարագայում Եվրոպական բրենդերը կարող են ձգտել նոր մատակարարներ փնտրել: Սա հատկապես կարևորվում է այն հանգամանքով, եթե ՀՀ-ն հայտ ներկայացնի ԵՄ անդամակցության համար:

2023թ.-ին համամետական առավելություններ ունեցող 21 խմբերից մեկ խմբի՝ 71-ի պարագայում, ապրանքների արտահանման կառուցվածքում վերջինիս տեսակար կշիռը 2021թ.-ի համեմատ 2024թ.-ին ավելացել էր 50.7%-ային կետով՝ կազմելով 61.7% (2023թ.-ին՝ 38.4%), որը հիմնականում պայմանավորված է 2024թ.-ի հատկապես առաջին եռամսյակի ցուցանիշներով՝ հատկապես ոսկու (7108) վերաարտահանմամբ (որոշակի վերամշակումից հետո), որը ներկրվում էր ՌԴ-ից, քանի որ մնացած ամսիսներին արտահանման ծավալները զգալիորեն

⁴² ՀՀ ՎԿ (2023). Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի և ք. Երևանի 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ք. Երևան, էջ 6: ՀՀ ՎԿ (2025). Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման 2024 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ք. Երևան, էջ 5:

⁴³ ՀՀ ԿԲ-ի «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» առցանց տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

⁴⁴ ՀՀ ՎԿ (2023). Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի և ք. Երևանի 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ք. Երևան, էջ 6: ՀՀ ՎԿ (2025). Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման 2024 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ք. Երևան, էջ 5:

⁴⁵ ՀՀ ԿԲ-ի «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» առցանց տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

կրճատվեցին, որի հիմքում ԱՄԷ-ի կողմից ձեռնարկված գործողություններն էին, ինչի հետևանքով ավելացան Հոնգ Կոնգի կողմից ՌԴ ոսկու ներմուծումը, որի պարագայում ոսկու արտահանումը ՀՀ-ից Հոնգ Կոնգ 2024թ.-ին ավելացավ շուրջ 2.7 մլրդ ԱՄՆ դոլարով, ինչպես նաև ավելացել էին ոսկերչական իրերի արտահանումը⁴⁶: Ինչ վերաբերում է ադամանդի արտահանմանը, ապա ԵՄ և G-7 երկրների կողմից կիրառված պատժամիջոցներով պայմանավորված, որոնք ուժի մեջ էին մտել 2024թ.-ին և վերաբերում էին երրորդ երկրներում վերամշակված ադամանդներին, ապա վերջիններս ազդելու են ՀՀ-ից արտահանման ծավալների վրա, ինչն էլ իր հերթին կարող է ազդել նաև ադամանդի քար ունեցող ժամացույցների արտահանման վրա⁴⁷: Իսկ արդեն 2024թ.-ին ադամանդի արտահանումը 2023թ.-ի համեմատ կրճատվել էր շուրջ 105 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 485.6 մլն ԱՄՆ դոլար:

Միևնույն ժամանակ՝ համաձայն այլ հեղինակների կողմից կատարված հաշվարկների^{48,49} 2012-2022թթ.-ներին հանդես է եկել որպես համեմատական առավելություններ ունեցող խումբ, հետևաբար, թեպետ երրորդ երկրներին վերագրվող պատժամիջոցներից խուսափելու նպատակով խմբի արտահանման ծավալները կրճատվեն խումբը կշարունակի հանդես գալ որպես համեմատական առավելություններ ունեցող խումբ միջնաժամկետ հատվածում, քանի որ 2025թ.-ի սկզբում գործարկվել է «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն: Այս խմբի արտահանման պարագայում կարևորվում է ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ փոխարժեքը, ինչը կարող է որոշակիորեն բացասաբար ազդել խմբի արտահանման ծավալների վրա:

Երբ համեմատում ենք արտահանվող ապրանքախմբերի BRCA-ի 2018-2022թթ.-ի միջին արժեքները 2023թ.-ի նույն ապրանքախմբերի ցուցանիշների

⁴⁶ King, A. (n.d.). Letter on Russian gold sanctions. Retrieved from: https://www.king.senate.gov/imo/media/doc/russian_gold_sanctions_letter.pdf.

⁴⁷ Foreign, Commonwealth & Development Office, & Department for Business and Trade. (2024, November 27). Joint statement on G7 diamond sanctions. GOV.UK. Retrieved from: <https://www.gov.uk/government/news/joint-statement-on-g7-diamond-sanctions>. European Commission. (2023, October 15). EU adopts the 12th package of sanctions against Russia. European Commission. Retrieved from:

https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_23_6566.

⁴⁸ Makaryan, A.R. (2018). Armenia's Comparative Advantage in Producing and Exporting the Harmonized System Standard Product Groups. Региональные проблемы преобразования экономики, 2(88), p.98. doi: 10.26726/1812-7096-2018-2-93-102. Mkrtchyan, H. G. (2024). Products Mapping: The Case of Armenia. Региональные проблемы преобразования экономики, 5 (163), p.263. doi:10.26726/1812-7096-2024-5-258-271.

⁴⁹ Մակարյան, Ա. Ռ., Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղավածության քաղաքականության առաջնությունները ՀՀ-ում/ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ ՏԻ: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018. էջ 71:

հետ, ապա ստացվում է հետևյալ պատկերը: 1, 3, 7, 20, 72, 76 խմբերը 2023թ.-ին 2018-2022թթ. միջինի համեմատ դարձել են թույլ համեմատական առավելություն ունեցող խմբեր միջին համեմատական առավելության փոխարեն: 6-րդ խումբը նույն ժամանակահատվածների համեմատությամբ պահպանել է իր միջին համեմատական առավելությունը: 62-րդ խումբը նույն ժամանակահատվածի կտրվածքով ուժեղ համեմատական առավելությունից դարձել է միջին համեմատական առավելություն ունեցող խումբ: 22, 24, 26 ու 71-րդ խմբերը պահպանել են իրենց ուժեղ համեմատական առավելությունները:

Մինևույն ժամանակ 2023թ.-ին համեմատական առավելություններ ունեցող արտահանվող խմբերի վերլուծությունը փաստում է հետևյալի մասին՝

1. ՌԴ-ում հնարավոր ֆինանսական ճգնաժամի արձանագրման պարագայում 2025թ.-ին (հատկապես արժույթային), վերջինս բացասաբար է անդրադառնալու 21 խմբից անմիջականորեն 9 խմբի արտահանման ծավալների վրա (3, 6, 7, 8, 18, 20, 22, 43, 61), իսկ 3 խումբը (45, 57, 92) չի համարվի համեմատական առավելություն ունեցող խումբ: Հետևաբար, վերը թվարկված 9 խմբի պարագայում, եթե ՌԴ ռուբլին կտրուկ արժեզրկվի ՀՀ դրամի նկատմամբ 2025թ.-ին, ապա դա կարող է հանգեցնել արտահանվող խմբերի ծավալների զգալի կրճատմանը, ինչի արդյունքում այդ խմբերը կարող են 2025-2026թթ.-ներին չհամարվել մրցակցային առավելություններ ունեցող խմբեր, եթե այլ խմբերի կտրվածքով չարձանագրվի արտահանման ծավալների կտրուկ անկում:

2. Հիֆսական մետաղների և խտահանքերի արտահանման պարագայում (խումբ, 26, 72, 76, 78) ակնկալվող սպառազինությունների վրա կատարվող ծախսերի աճը կհանգեցնի մի շարք ապրանքային դիրքերի նկատմամբ պահանջարկի ավելացմանը, սակայն այստեղ վճռորոշ է լինելու 2 հանգամանք՝ մետաղների գները համաշխարհային շուկայում, ինչպես նաև ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքը: Հետևաբար, այս պարագայում համաշխարհային գների բավականին բարձր մակադակը կարող է փոխհատուցել ամրապնդված ՀՀ դրամի պարագայում ընկերությունների կողմից կրած ֆասսները ՀՀ դրամով հասույթը ստանալիս և համապատասխան անհրաժեշտ ծախսերը ՀՀ դրամով կատարելիս, որի դեպքում ընկերությունները կարող են շահագրգռված չլինել ավելացնելու արդյունահանվող ծավալները աճող միջազգային պահանջարկն բավարարելու նպատակով: Այս պարագայում կարող է արձանագրվել արտահանման ծավալների որոշակի, բայց ոչ զգալի ծավալների աճ կամ նույնիսկ որոշակի կրճատում, ինչպես դա տեղի էր ունեցել մոլիբդենի արտահանման պարագայում 2021-2023թթ.-ների ընթացքում:

3. Պատժամիջոցներով պայմանավորված թեպետ կկրճատվի խումբ 71-ի արտահանումը, սակայն կաճի ՀՀ ծագում ունեցող ոկու արտահանման ծավալները միջնաժամկետ հատվածում, իսկ ՀՀ տարածքում (ոչ ռուսական ծագման) վերամշակված ադամանդի արտահանման ծավալների վրա հիֆսական գործոնը լինելու է ՀՀ դրամի Եվրոյի նկատմամբ փոխարժեքը, քանի որ 2024թ.-ին կրճատվել էին արտահանման ծավալները հատկապես Բելգիա և Իսրայել 2022թ.-ի համեմատ:

4. Արտապատվիրման աշխատանքների պայմանագրերով պայմանավորված Խումբ 62 ծավալների պարագայում ՀՀ դրամի փոխարժեքը Եվրոյի նկատմամբ որոշիչն է լինելու խմբի ծավալների աճի գործում, քանի որ արժեզրկման պարագայում ՀՀ-ն կարող է ներգրավել նոր պայմանագրեր, որոնք կարող են սպասարկել նաև Խումբ 61-ի ապրանքներ արտադրողները ՀՀ կառավարության համապատասխան աջակցության շնորհիվ:

Հետաքրքրական է նկատել, որ բացահայտված համեմատական առավելություններ ունեցող խմբերի մեջ չեն հայտնվել ՀՀ կառավարության կողմից 2023թ.-ին արդյունաբերության զարգացման նպատակով ընտրված հինգ գերակա ճյուղերը ներկայացնող մի շարք ոլորտներ⁵⁰, ինչպիսիք են՝ քիմիական արդյունաբերությունը և դեղագործությունը, սարքաշինությունը: Սա նշանակում է, որ մրցակցային առավելությունները պետք է ստեղծվեն, իսկ որպեսզի այդ խմբերը սկսեն հանդես գալ որպես համեմատական առավելություններ ունեցող խմբեր, ապա դա կարող է տեղի ունենալ միայն միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում և բացառապես համապատասխան ներդրումների և տեխնիկական վերազինման արդյունքում:

Հետևաբար, ԵՄ հնարավոր անդամակցության համատեքստում միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում ավելի լայն դիվերսիֆիկացում ապահովելու տեսանկյունից մեր կողմից առաջարկվում է հետևյալը՝

1. Խումբ 3, 6, 7, 8, 9, 18, 20, 22-ի կտրվածքով՝ համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան վաչության պատասխանատվության ներքո կարող է գործարկել կայք, որի նպատակը պետք է լինի օժանդակել գյուղացիների և տեղական արտադրողների կողմից դեպի ԵՄ արտահանվող ապրանքների խթանումը: Հաշվի առնելով արտադրանքի թողարկման արժեզրկայի կարևորությունը համապատասխան վարչությունը կայքում կտեղադրվի ամեն արժեզրկայի էլեմենտի կտրվածքով արտադրական գործընթացի մանրակրկիտ նկարագիրը և ինչ գործընթացներ պետք է իրականացվեն արտադրանքի թողարկման ամեն փուլում (ներառյալ տեսահոլովակներ, թերթոններ, ուղեցույցներ)՝ գյուղացուց սկսած և վերջնական ապրանքների արտադրողից վերջացրած: Կբացվի նաև թեժ գիծ, որի միջոցով, գյուղացիներին և արտադրողներին կտրամադրվի խորհրդատվություն: Կառավարությունը ԵՄ համապատասխան կառույցների օժանդակությամբ կարող է հիմնել համապատասխան լաբորատորիաներ անհրաժեշտ հավաստագրերը ստանալու նպատակով (անհրաժեշտության դեպքում), իսկ դրանց հիմնման անհնարինությամբ պայմանավորված համաֆինանսավորել (տարբեր համամասնություններով՝ կախված ոլորտից և արտադրողի թողարկման ծավալներից) հավաստագրերի ստացումը մոտակա երկրների լաբորատորիաներից: Անհրաժեշտ վերազինման գործընթացն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը

⁵⁰ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N 534-Լ Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների հայեցակարգը հաստատելու մասին որոշման հավելված, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176608>:

կարող է բանակցել օրինակ Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկի հետ՝ վերազինման համար վարկային միջոցներ ներգրավելու նպատակով: Կառավարությունը կարող է փոխհատուցել վերազինման նպատակով արտադրողներին տրամադրվող վարկերի տոկոսագումարները, և այլն: Կառավարությունը նաև կարող է ԵՄ համապատասխան կառույցներից գրանտային միջոցներ ներգրավելով ստանդարտների վերաբերյալ դասընթացներ կազմակերպել՝ հավաստագրերի ստացման հետ կապված: Կառավարությունը կարող է հայտարարել մրցույթ հրավիրելու միջազգային խորհրդատվական ընկերությանը մշակելու 3 կամ 4 հովհանոցային բրենդ (մասնավորաբար առանձին՝ պտուղ և բանջարեղենի, սննդամթերքի, ինչպես նաև խմիչքների համար), որոնց ներքո կարտահանվեն տվյալ խմբերի ապրանքները և կստեղծվի տարբերանշանը, որը կլինի ապրանքի պիտակի վրա, միայն այն դեպքում, եթե ապրանքը համապատասխանի խիստ պահանջներին: Այդ ընկերությունը կմշակի համապատասխան ռազմավարությունը ԵՄ երկրներում այդ բրենդերի կայացման նպատակով, որն էլ կիրագործվի ՀՀ կառավարության հետ համատեղ: Եթե միջնաժամկետ հատվածում ՀՀ-Թուրքիա կապուղիները փակ լինեն, կառավարությունը կարող է նաև մասնակիորեն փոխհատուցել բեռնափոխադրումների ծախսերը, եթե ապրանքի բեռնափոխադրումը իրականացվի Վրաստանի տարածքով:

2. Ինչ վերաբերում է հագուստի արդյունաբերությանը, ապա ինչպես Ս. Դոխոյանն ու Ա. Մակարյանն են առաջարկել (2023թ.), արտապատվիրման աշխատանքներ իրականացնող ընկերությունները կարող են ընդլայնել արտադրական հզորությունների՝ ներառյալ նոր մասնաշենքերի կառուցման ճանապարհով⁵¹, սա էլ հնարավորություն կտա մասշտաբի էֆֆեկտի միջոցով գործառնական արդյունավետություն ապահովել՝ ավելի մեծ ծավալի աշխատանքներ կատարելու նպատակով, ինչն էլ հնարավորություն կտա որոշակիորեն չեզոքացնել փոխարժեքի տատանումները: Այդ ընկերությունները նաև կարող են չինական «Seduno» ընկերության նման բարձրակարգ դիզայներների հետ համագործակցության արդյունքում՝ համապատասխան արդիականացման հետևանքով արժեշտայնի ավելի բարձր արժեք ստեղծող գործառույթներ իրականացնել՝ օգտվելով ԵՄ շուկաներին մոտ գտնվելու հանգամանքից⁵²: Այս ընկերությունները նաև կարող են անձրևանոցային բրենդի ներքո հանդես գալ այն ընկերությունների հետ, որոնք սպասարկում են տեղական շուկան և արտահանում են ՌԴ, սակայն դա չպետք է կրկնի «5900 BC» բրենդի ճանապարհը: Ընկերությունները կարող են սփյուռքահայ հայտնի անձանց միջոցով՝ սերտորեն համագործակցելով ինչպես սփյուռքահայ, այնպես էլ տեղական դիզայներների հետ արտադրել այնպիսի արտադրանք, որը նախատեսված է միջին սեգմենտի համար, սակայն այստեղ ևս կարևորվում է

⁵¹ Dokholyan, S.V., & Makaryan, A.R. (2023). Impact Assessment of the Ban on Turkish Imports on the Growth of Wearing Apparel Manufacturing in Armenia. *Economy of Regions*, 19(4), p.1245. doi.: 10.17059/ekon.reg.2023-4-21

⁵² Տե՛ս նույն տեղում:

վերազինման դերը⁵³: Կառավարությունը կարող է միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցելով իրականացնել վերազինումը՝ մատչելի վարկավորման պայմաններում, ինչպես նաև ներգրավել միջազգային խորհրդատվական ընկերություն՝ անձրևանոցային բրենդի ստեղծման և ապրանքների առաջնության նպատակով: Այս պարագայում առաջնահերթ է ինքնատիպի դիզայնի ռակայությամբ հագուստի պարագաների արտադրությունը:

3. Նմանատիպ՝ անձրևանոցային բրենդի ստեղծման միջոցով՝ սերտ համագործակցելով միջազգային խորհրդատվական ընկերության հետ, ինչպես նաև հայտնի սփյուռքահայ և տեղական դիզայներների հետ, տեղական արտադրողների կողմից թողարկված ոսկերչական իրերը, որի վրա կարող են լինել ՀՀ-ում մշակված ադամանդե քարերը և հանդես գալ, որպես յուրահատուկ դիզայնով իրեր կվաճառվեն ԵՄ շուկաներում՝ հատկապես միջին և պրեմիում սեգմենտի համար նախատեսված:

Եզրակացություն: Արտահանվող 97 ապրանքախմբերից միայն 21-ի դեպքում էր բացահայտվել, որ տվյալ խմբերը ունեցել են համեմատական առավելությունների: Միևնույն ժամանակ, 19-ի դեպքում համեմատական առավելությունները բացահայտվել են բոլոր՝ մեր կողմից հաշվարկված համաթվերի արդյունքներով (BRCA, RSCA, NRCA, ARCA, WRCA): 21 ապրանքախմբերի արտահանումը կազմում էր ապրանքախմբերի արտահանման մոտ 69.2%-ը 2023թ.-ին 2021թ.-ի 87.4%-ի համեմատ: Արտահանվող խմբերի արտահանումը հատկապես խոցելի է ՌԴ տնտեսական վիճակից, մասնավորապես՝ ՌԴ ռուբլու ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքից: Հետևաբար, եթե 2025թ.-ին ՌԴ-ում ֆինանսական ճգնաժամ արձանագրվի (օրինակ արժութային), ապա դա ամիջականորեն բացասաբար է անդրադառնալու 21 խմբից 9 խմբի արտահանման վրա (3, 6, 7, 8, 18, 20, 22, 43, 61 (ոլորտներ՝ գյուղատնտեսություն և ձկնաբույություն, սննդամթերքի վերամշակում, խմիչքի արտադրություն, թեթև արդյունաբերություն): Կախված նրանից, թե ինչպես ՀՀ դրամը կամրպանդվի, ապա դա կարող է արտահանման ծավալների կտրուկ անկման հանգեցնել: Միևնույն ժամանակ 3 խմբի պարագայում (45, 57, 92) արտահանման ծավալների կրճատումը անկախ նրանից, թե ինչպես կտատանվի ՀՀ դրամը ռուբլու նկատմամբ փոխարժեքը, ծավալները կկրճատվեն, քանի որ այդ խմբերի իր հայտ գալը որպես համեմատական առավելություն ունեցողներ պայմանավորված էր վերաարտահանմամբ: Հիմնական մետաղների և խտահանքերի արտահանման դեպքում (խումբ, 26, 72, 76, 78) ակնկալվող սպառազինությունների վրա ուղղվող ծախսերի աճը կհանգեցնի մի ապրանքային դիրքերի նկատմամբ պահանջարկի ավելացմանը: Միևնույն ժամանակ արտահանման ծավալների աճը կախված է լինելու, ինչպես մետաղների գներից, այնպես էլ ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքից: Թեև պատժամիջոցներով պայմանավորված ակնկալվում է խումբ 71-ի արտահանման ծավալների

⁵³ Dokholyan, S.V., & Makaryan, A.R. (2023). Impact Assessment of the Ban on Turkish Imports on the Growth of Wearing Apparel Manufacturing in Armenia. *Economy of Regions*, 19(4), p.1245. doi.: 10.17059/ekon.reg.2023-4-21

զգալի անկում 2025թ.-ին, ՀՀ ծագում ունեցող ոսկու արտահանման ծավալները կաճեն միջնաժամկետ հատվածում, մինչդեռ վերամշակված ադամանդի (ոչ ռուսական ծագման) արտահանման ծավալների փոփոխության վրա հիմնականում ազդելու է ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ փոխարժեքը: Կարևորելով դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը կատարված վերլուծությունների հիման վրա առաջարկվել են համապատասխան միջոցառումներ տարբեր ապրանքային խմբերի կտրվածքով դեպի ԵՄ արտահանման ծավալների ավելացման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման հիմնավորում, Ք-985-13.12.2024,29.01.2025-ԵԻ-011/1, http://www.parliament.am/draft_docs8/Q-985.pdf:
2. ՀՀ ԱԺ-ի 2025 թ.-ի փետրվարի 12-ի «Եվրամիությանը Հայաստանի անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագիծը» Ք-985-13.12.2024,29.01.2025-ԵԻ-011/1:
3. ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի ՀՀ կառավարության 2017-2022 թթ. ծրագիր հաստատելու մասին N 646-Ա որոշման Հավելված, 123 էջ, <https://www.gov.am/files/docs/2207.pdf>:
4. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության 2019 թ. ծրագիրը հաստատելու մասին N 65-Ա որոշման Հավելված, 70 էջ, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>:
5. ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված Հավելված, 1421 էջ, <https://www.gov.am/files/docs/5145.pdf>:
6. ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիրը հաստատելու մասին N 1363-Ա որոշման Հավելված, 102 էջ, <https://www.gov.am/files/docs/4586.pdf>:
7. ՀՀ կառավարության 2023 թ.-ի ապրիլի 13-ի N 534-Լ Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների հայեցակարգը հաստատելու մասին որոշումն հավելված, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176608>:
8. ՀՀ օրենքը «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» առ. 26.03.2025թ., Ք-985-13.12.2024,29.01.2025-ԵԻ-011/2ամբ., http://www.parliament.am/draftreading_docs8/Q-985_DR2.pdf:
9. Մակարյան, Ա. Ռ., Արտահանման խթանման նպատակով համապատասխան ոլորտների ընտրությունը և զբաղավածության քաղաքականության առաջնայնությունները ՀՀ-ում/ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնա-

- խնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018. էջ 66-75:
10. Մալումյան Գ., Գյուլազյան Է. (2016). Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) տարածքում նոր տնտեսական հնարավորությունների բացահայտում, ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյան և ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, -Եր.: Անտարես, 100 էջ, <https://www.osce.org/files/f/documents/2/e/256151.pdf>
 11. Մելքումյան Ս., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Բահարյան Ֆ., Հակոբյան Տ. Առաքելյան Տ., Հովակիմյան Հ., Մելքումյան Զ. (2015). ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում.- Եր.: Տնտեսագետ, 104 էջ. («Ամբերդ» մատենաշար 24), https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Amberd_24.pdf
 12. Մովսիսյան, Շ. (2021). ՀՀ արտահանման ներուժը, ո՞ր ոլորտում է ՀՀ-ն մրցունակ, Ամբերդ տեղեկագիր, N3, էջ 89-95, doi: 10.52174/2579-2989_2021_3_89:
 13. Նազարյան Գ., Հախվերդյան Դ. (2015). Հայաստանի համեմատական առավելությունները ԵՏՄ երկրների առևտրային հոսքերի համադրության մեջ. 21-րդ ԴԱԴ. Տեղեկատվական-վերլուծական հանդես, 3(61). Նորավանք ԳԿՀ. էջ 67-86, https://www.noravank.am/upload/pdf/21_DAR_03_2015.pdf:
 14. Balassa, B. (1965). Trade Liberalisation and “Revealed” Comparative Advantage. The Manchester School of Economic and Social Studies, 33(2), pp. 99-, doi: 10.1111/j.1467-9957.1965.tb00050.x.
 15. Dalum, B., Laursen, K., & Villumsen, G. (1998). Structural Change in OECD Export Specialisation Patterns: de-specialisation and “stickiness”. International Review of Applied Economics, 12(3), 423-443. doi:10.1080/02692179800000017
 16. Dokholyan, S.V., & Makaryan, A.R. (2023). Impact Assessment of the Ban on Turkish Imports on the Growth of Wearing Apparel Manufacturing in Armenia. *Economy of Regions*, 19(4), 1237–1250. doi.: 10.17059/ekon.reg.2023-4-21
 17. Galoyan, D., Tadevosyan, Z., Makaryan, A., & Mkrtchyan, H. (2024). Mining of Metal Ores Industry and Economic Growth Nexus in Armenia: Challenges and Prospects. *Proceedings on Engineering Sciences*, 6(2), 731–744. doi.: 10.24874/pes06.02.030
 18. Hoen, A. R., & Oosterhaven, J. (2006). On the measurement of comparative advantage. The Annals of Regional Science, 40(3), 677–691. doi.:10.1007/s00168-006-0076-4
 19. Lafay, G. (1992). The Measurement of Revealed Comparative Advantages. In: Dagenais, M.G. and. Muet, P.A. (eds.), International Trade Modelling, London: Chapman & Hall, pp. 209-234.
 20. Makaryan, A.R. (2018). Armenia’s Comparative Advantage in Producing and Exporting the Harmonized System Standard Product Groups. Региональные проблемы преобразования экономики, 2(88), 93-102. Retrieved from: <http://rppe.ru/new/index.php/rppe/article/view/744>. doi:10.26726/1812-7096-2018-2-93-102.
 21. Mkrtchyan, H. G. (2024). Products Mapping: The Case of Armenia. Региональные проблемы преобразования экономики, 5 (163), 258-271. Retrieved from:

- <http://rppe.ru/new/index.php/rppe/article/view/2511>. doi:10.26726/1812-7096-2024-5-258-271.
22. Ullah, M. & Kazuo, I. (2012) Dynamics of Comparative Advantage and Export Potential in Bangladesh, *The Ritsumeikan Economic Review*, Vol. 61, No. 4, pp. 471-484.
 23. Widodo, T. (2008). Dynamic changes in comparative advantage: Japan “flying geese” model and its implications for China. *Journal of Chinese Economic and Foreign Trade Studies*, 1(3), 200–213. doi: 10.1108/17544400810912365.
 24. Yu, R., Cai, J. & Leung, P. (2008). The normalized revealed comparative advantage index. *The Annals of Regional Science*, 43(1), 267-282. doi: 10.1007/s00168-008-0213-3.
 25. European Commission. (2013). *EU-Armenia Deep and Comprehensive Free Trade Area* (MEMO/13/728), https://ec.europa.eu/commission/presscorner/api/files/document/print/en/memo_13_728/MEMO_13_728_EN.pdf
 26. European Commission. (2023, October 15). EU adopts the 12th package of sanctions against Russia. European Commission. Retrieved from: https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/ip_23_6566.
 27. European Commission. (n.d.). *EU-Georgia Deep and Comprehensive Free Trade Area.*, <https://trade.ec.europa.eu/access-to-markets/en/content/eu-georgia-deep-and-comprehensive-free-trade-area>
 28. Foreign, Commonwealth & Development Office, & Department for Business and Trade. (2024, November 27). Joint statement on G7 diamond sanctions. GOV.UK. Retrieved from: <https://www.gov.uk/government/news/joint-statement-on-g7-diamond-sanctions>
 29. Infocenter.gov.ge. (n.d.). *Ասոցիացիայի համաձայնագիրը*, <https://infocenter.gov.ge/hy/eu-georgia/association-agreement/>
 30. King, A. (n.d.). Letter on Russian gold sanctions. Retrieved from: https://www.king.senate.gov/imo/media/doc/russian_gold_sanctions_letter.pdf.
 31. Perchoc, P. (2018). *Comprehensive and Enhanced Partnership Agreement with Armenia* (PE 623.565). European Parliamentary Research Service, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2018/623565/EPRS_ATA\(2018\)623565_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2018/623565/EPRS_ATA(2018)623565_EN.pdf):
 32. ՀՀ ԿԲ-ի «Դրամի նկատմամբ որոշ արժույթների փոփոխությունները և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» առցանց տվյալների բազա, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:
 33. ՀՀ ՎԿ (2023). Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման, ըստ մարզերի և ք.Երևանի 2022 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ք. Երևան, 59էջ:
 34. ՀՀ ՎԿ (2025). Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման 2024 թվականի հունվար-դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ք. Երևան, 9էջ:
 35. ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա՝ ըստ երկրների» առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=717>

36. ՀՀ ՎԿ-ի «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, <https://www.armstat.am/am/?nid=203>:
37. ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, <https://comtradeplus.un.org/>:

ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ ՄՎԵՏԼԱՆԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականություն: ՀՀ տնտեսության ու արտահանման դիվերսիֆիկացման գործընթացը հրատապ է հատկապես ապրանքային խմբերի համեմատական առավելությունները բացահայտելու տեսանկյունից, քանի որ դիվերսիֆիկացման համատեքստում մրցակցային համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերով պայմանավորված արտահանման ծավալների աճը կարևոր նշանակություն ունի տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովելու գործում, ինչով էլ բացատրվում է տվյալ **հետազոտության արդիականությունը:**

Հոդվածի նպատակն է վերլուծել ու բացահայտել ՀՀ մրցակցային առավելությունները՝ արտահանվող ապրանքախմբերի կտրվածքով մի շարք համեմատական առավելությունների ինդեքսների հաշվարկման հիման վրա՝ մատնանշելու առկա մարտահրավերները և նախանշել արտահանման դիվերսիֆիկացման հնարավորությունները ԵՄ հնարավոր անդամակցության համատեքստում:

Ներկայացված նպատակի իրագործման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները.**

- մի շարք համաթվերի հիման վրա վերլուծել և հաշվարկել արտահանվող տարբեր ապրանքային խմբերի համեմատական առավելությունը,
- ԵՄ հնարավոր անդամակցության համատեքստում առաջարկել քայլեր արտահանման ավելի լայն դիվերսիֆիկացում ապահովելու նպատակով:

Մեթոդաբանություն: Վերլուծության համար հիմք է հանդիսացել ՄԱԿ-ի առևտրի վիճակագրության 97 ապրանքախմբերի արտահանման տվյալները՝ ըստ ապրանքների նկարագրման և ծածկագրման Ներդաշնակեցված համակարգի (HS) 2-նիշ դասակարգման, 2023թ.-ի կտրվածքով, ու հաշվարկվել են համեմատական առավելությունների հետևյալ համաթվերը՝ BRCA-ը, RSCA-ը, NRCA-ը, ARCA-ը, ինչպես նաև WRCA-ը:

Ստացված արդյունքներ: 2023թ.-ին 97 ապրանքախմբերից միայն 21-ի դեպքում են արձանագրվել համեմատական առավելությունների առկայություն՝ ընդ որում 19-ի դեպքում համեմատական առավելությունները բացահայտվել են բոլոր համաթվերի արդյունքներով: Տվյալ ապրանքախմբերին բաժին էր ընկնում

ապրանքների արտահանման մոտ 69.2%-ը, մինչդեռ տվյալ ցուցանիշը 2021թ.-ին կազմել էր 87.4%: ՌԴ-ում հնարավոր ֆինանսական ճգնաժամի արձանագրման պարագայում 2025թ.-ին (հատկապես արժութային) դա բացասաբար է անդրադառնալու 21 խմբից անմիջականորեն 9 խմբի արտահանման ծավալների վրա (3, 6, 7, 8, 18, 20, 22, 43, 61), իսկ 3 խումբը (45, 57, 92) չեն համարվի համեմատական առավելություն ունեցող խումբ: Ստացված արդյունքների հիման վրա կարևորելով դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը առաջարկվել են համապատասխան միջոցառումներ տարբեր ապրանքային խմբերի կտրվածքով դեպի ԵՄ արտահանման ծավալների ավելացման նպատակով:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները: Ստացված արդյունքները հնարավորություն կտան ՀՀ կառավարությանը օգտագործել վերջիններս տնտեսության և արտահանման դիվերսիֆիկացում ապահովելու նպատակով համապատասխան ռազմավարությունները մշակելիս:

Բանալի բառեր. Համեմատական առավելություն, դիվերսիֆիկացում, արտահանում, տնտեսական ռիսկեր, տնտեսական աճ, Հայաստան

СРАВНИТЕЛЬНЫЕ ПРЕИМУЩЕСТВА ЭКСПОРТНЫХ ГРУПП ТОВАРОВ

АННА МАКАРЯН
СВЕТЛАНА ДАЛЛАКЯН
ГАМЛЕТ МКРТЧЯН

Аннотация

Актуальность статьи. Процесс диверсификации экономики и экспорта в Армении является актуальным, особенно с точки зрения выявления сравнительных преимуществ товарных групп и их сопоставления, поскольку в контексте диверсификации рост объемов экспорта за счет товарных групп, обладающих конкурентными сравнительными преимуществами, имеет решающее значение для обеспечения высокого экономического роста, что объясняет актуальность данного исследования.

Цель данной статьи - проанализировать и выявить конкурентные преимущества Армении на основе расчета и сравнения нескольких показателей сравнительных преимуществ в разрезе экспортируемых товарных групп, что бы указать на существующие проблемы и наметить возможности диверсификации экспорта в контексте возможного членства в ЕС.

Для достижения этой цели были поставлены следующие **задачи**:

- Проанализировать и рассчитать сравнительные преимущества различных групп экспортных товаров на основе нескольких показателей.
- Предложить шаги по обеспечению более широкой диверсификации экспорта в контексте возможного членства в ЕС.

Методология. Анализ был основан на данных торговой статистики Организации Объединенных Наций об экспорте 97 товарных групп в соответствии с двузначной классификацией Гармонизированной системы описания и кодирования товаров на 2023 год. Были рассчитаны следующие индексы сравнительных преимуществ: BRCA, RSCA, NRCA, ARCA, и WRCA.

Результаты. В 2023г. только в случае с 21 из 97 товарных групп были зафиксированы сравнительные преимущества, в то время как в случае с 19 сравнительные преимущества были выявлены по всем показателям. На эти товарные группы приходилось около 69,2% экспорта товаров, в то время как в 2021 году этот показатель составлял 87,4%. В случае возможного финансового кризиса в России (в 2025 году, особенно валютного), это негативно скажется на объемах экспорта сразу 9 групп из 21 группы (3, 6, 7, 8, 18, 20, 22, 43, 61), и 3 группы (45, 57, 92) не будут рассматриваться как группы со сравнительными преимуществами. Основываясь на полученных результатах и подчеркивая необходимость диверсификации, соответствующие меры были предложены для увеличения экспорта в ЕС.

Возможности применения полученных результатов. Полученные результаты позволят правительству РА использовать их при разработке соответствующих стратегий для обеспечения диверсификации экономики и экспорта страны.

Ключевые слова. Сравнительные преимущества, диверсификация, экспорт, экономические риски, экономический рост, Армения.

COMPARATIVE ADVANTAGES OF EXPORTED PRODUCT GROUPS

ANNA MAKARYAN
SVETLANA DALLAKYAN
HAMLET MKRTCHYAN

Abstract

Relevance of the article: The diversification of Armenia's economy and export structure is of critical importance, particularly through the identification of the comparative advantages of specific product groups. In the context of economic diversification, the expansion of exports based on product groups with strong comparative advantages is essential for sustaining high levels of economic growth. This imperative underline **the relevance of this study**.

The **purpose** of this study is to analyze and identify Armenia's competitive advantages based on the calculation and comparison of several comparative advantage indices in the context of exported product groups to point out existing issues, and outline export diversification opportunities in the context of possible European Union (EU) membership. In the scope of that purpose the following **research objectives** have been set:

- To analyze and calculate the comparative advantage of various export product groups based on several indices.
- To propose steps to ensure broader export diversification in the context of possible EU membership.

Methodology: The analysis was based on data from the United Nations trade statistics database on exports of 97 commodity groups in accordance with the two-digit classification of the Harmonized Commodity Description and Coding System for 2023. The following comparative advantage indices were calculated: BRCA, RSCA, NRCA, ARCA, and WRCA.

Results: The analysis reveals that only 21 out of 97 product groups exhibited a comparative advantage. By contrast, in 2023, comparative advantage was confirmed for 19

product groups based on the results across all applied indices. The exports of these product groups accounted for approximately 69.2% of Armenia's total merchandise exports, a decline from 87.4% observed in 2021. In the event of a potential financial crisis in Russia in 2025, particularly a currency crisis, the exports of 9 out of the 21 product groups (specifically groups 3, 6, 7, 8, 18, 20, 22, 43, and 61) would be directly affected. Furthermore, three additional groups (45, 57, and 92) would no longer qualify as groups with a comparative advantage. Based on these findings, emphasizing the need for diversification, appropriate measures to increase exports to the EU markets have been proposed.

Practical Implications: The findings of this study could serve as a foundation for the RA Government in formulating effective strategies aimed at promoting economic and export diversification.

Keywords: Comparative advantage, diversification, export, economic risks, economic growth, Armenia